

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Դ Գ Ի Դ Գ Ի Դ Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1899 ԹՒԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՄՇԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Ս. Բ. օգոստոսի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

ՄՇԱԿԻՆ գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՍԱՆԸ (Բաղարայայ և Բարձրակայա փողոցների անկիւնը):

Կայտարարութեան ուրիշ բաղադրանքից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել Տեղեկատու հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“; իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“:

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր հանրային հարստութիւնը. — ՆեմֆիՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Իշխան Իշխա Ճավաճաճէ և Նայերը. Կառավարական հաղորդագրութիւն. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԵՐ ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Մինչդեռ տասնեակ տարիներ Անդրկովկասը իր բազմադարեւ հանքային հարստութիւններով լուրջ հետաքրքրութեան չէր արժանանում այժմ նոյն գործի վերաբերութեամբ սկսել է մի տենդային դրութիւն: Հանքեր որոնելով, հանքային հորեր ձեռք բերելով այժմ զբաղված են ոչ միայն փողի, կապիտալի ներկայացուցիչներ, այլ և հասարակ շինականների, երկրագործութեամբ պարագայով գիւղացիներ: Մասնաւոր մեծ է պղնձի հանքերի տարածութիւնը: Արաքսի և Կուրի մէջ գտնվող լեռնային բարձրաւանդակի արեւելեան մասը, որ պարունակում է իր մէջ Զանգեզուրը, Արցախը, Գանձակը, Լազիսը, Բորչալուն և մօտակայ տեղերը՝ լիքն է պղնձահանքերի նշաններով: Այդ ընդարձակ տարածութեան մէջ միայն մի քանի կէտեր կան, որտեղ շահագործվում է պղնձը բաւարար կերպով, այն է Զանգեզուրի հանքերում, Գանձակի գաւառի Սիմեոն ընկերութեան հանքում և Բորչալուի գաւառի հանքերում:

Բնականաբար հարց է ծագում, թէ արդեօք մեր հանք որոնողները և հանքագործութեան նուիրվող անձինք չափազանց չեն գրավում հանքագործութեան շահաւետութեան վերաբերմամբ և արդեօք մեր երկիրը այնքան չի առատացնի հանքի պաշարը վաճառանոցում, որ նա սովորած լինի կորցնել իր գինը: Այդ կասկածը մենք հաստատապէս կարող ենք փարատել գոնէ այն մետալի վերաբերութեամբ, որ ամենամեծ դերն է կտատում մեր հանքային գործի մէջ, այն է պղնձի վերաբերութեամբ: Պղնձի մեծ պակասութիւն է զգացվում Ռուսաստանում, որտեղ պահանջը տարեցտարի աւելանում է, իսկ երբեք հանքերը անկարող են հանգիստնում այդ պահանջը լրացնելու: Ամբողջ

կայտարարութիւնը տարեկան արդիւնաբերում է մօտ 350,000 պուդ պղնձ, իսկ արտասահմանից ներմուծում է մօտ 800,000 պուդ, որպէս զի ապահովէ իր գործարանները և արհեստանոցները կարիքները: Այդ պակասը լրացնելու համար դեռ շատ պէտք է աշխատել, շատ հանքեր պէտք է բովի տակ գցել, որպէս զի կարելի լինի խօսք բարձրացնել հանքի չափազանց մեծ քանակութեան մասին:

Անգլիական և ֆրանսիական ընկերութիւններ արդէն սակարկութիւն են սկսել մեր երկրում պղնձի հանքի ձեռք բերելու համար և նոյն-իսկ տուել են հանքատէրերին կանխավճարով խոշոր գումարներ: Մի մեծ ռուսական ընկերութիւն էլ կապալով է վերցրել Արաքսի պարսկական ափի վրա գտնվող Լարաբադի հարուստ հանքերը, որոնց վրա վաղուց ռուսաբնակները երկրի դարձնել պահանջները, բայց ժամանակին գործի չը ձեռնարկեցին: Հանքագործութիւնը մտնում է խոշոր կապիտալի հովանաւորութեան և հեղինակութեան տակ: Մի այսպիսի ժամանակակիւր է, որ մեր մասնագէտ երիտասարդները կարողանային բաւականաչափ հմտութիւն ցոյց տալ թէ՛ կազմակերպելու խոշոր ձեռնարկութիւններ և թէ՛ կատարելագործված եղանակներով շահագործելու երկրի անսպառ հարստութիւնները: Մեզինք պահանջում են մետալ մեծ քանակութեամբ. — մեր երկիրը ունի այդ մետալը: Նահագործենք նրան խելացի կերպով, հարստացնելով մեր երկրի բիւջետը, և դրանով նպաստենք մեր կարիքների մի մասին բաւարարութիւն տալու:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Սեբաստիոն հրատարակվող մեր երկու վաղեմի ամսագրերը վերջին չորս-հինգ տարիներում սկսեցին ցոյց տալ մի համակերպ ձեռնարկ. — մօտեակ իրական կենսին, խօսել ոչ միայն Աղաթանգեղոսների, Սեբաստիոնների լեզուով, այլ և ժամանակակից հարցերի մասին: Մենք ժամանակին ողջունեցինք այդ նորութիւնը, որ առաջին անգամ մտցրեց Վիեննայի «Հանդէս Ամսօրեան»: Այժմ մենք տեսնում ենք մի թունդ մրցակցութիւն Վիեննայի «Բազմալէպի» կողմից:

Միայն նա ամեն ջանք գործ է դնում «աշխարհական» բովանդակութեան հասնելու և այդ բանի մէջ իր վիեննական եղբայրակցին «եօթն տարի» յետև թողնելու համար: «Բազմալէպի» վերջին համարը այդ ձգտման մէջ նոյն-իսկ չափազանցութեան է հասել, նա սկսել է գրել մէջ, յօդուածներ ճշտ միասին, տպել նաև լրագրիչների յայտարարութիւնները: Անկասկած է, որ երկու վաղեմի ամսագրերը, գոնէ այժմ, իրանց այդ նոր ուղղութեան մէջ ներկայացնում են մակընթացութեան և տեղափոխութեան օրինակներ, և տեղափոխութիւնը, անշուշտ, «Հանդէս Ամսօրեան» կողմն է: Ապրիլի համարում «Բազմալէպի» մի, եթէ կարելի է այսպէս ասել, առաջնորդող է նուիրել հայ լրագրութեան և նրա բաժանորդների հին, հարկւր անդամ ծամածամ հարցին: Միայն մենք չենք ուզում ասել, թէ այդ հարցը միանգամայն անտեղի է նորից քննելը. ընդհանրապէս, կան դառն ճշմարտութիւններ, որոնց պէտք է կրկնել, շատ կրկնել: Թողա՞նք իրարացի կերպով նկատում է, որ հայոց պարսկական մամուլը ողորմելի դրութիւն է քաշ տալիս շնորհիւ իր աղքատ և անապահով վիճակի: Եթէ նոր գրական ոյժեր չեն դուրս գալիս, եթէ եղածներն էլ յուսահատված քաշվում են ասպարէզից՝ դրա պատճառն այն է, որ հայ ընթերցողը չէ հասկանում իր պարտականութիւնը: Կարելի է որ հայուն այդ մտքի մշակները կարենան ապրել և ապրեցնել թերթ մը, երբ կը պատահին աղքատ մտքով և չոր սրտով բաժանորդներ, որոնց միայն գիրքն է և հնչող ձրի կարգով թերթը, առանց մտածելու թէ օրագրութիւնը անտեղի պէտք ունի:

Մեր մէջ ընթերցողը, այո, դեռ չը գիտէ թէ ինչ պիտի անէ ինքը և ինչ մեծ գործ ունի կատարելու:

Մեր ազգը եթէ ուզէ արեւելեան խաւարած ճորտերին իր միտքը դուրս քաշել, եթէ ուզէ պայմանական գեղղկալայել հողի բանջարեղէն թողնել, եթէ ուզէ շինական մորթիներ ուսն թօթվել և դիմել դէպ ի յայտ, ի զարգացում, դէպ ի յառաջագիտութիւն՝ անոր Սեբաստիոն իր շրջանից զբաղակալութեամբ թող լինի օրինակ և ուղեցոյց:

Այդ Սեբաստիոն, ամսագրի կարծիքով, ընթերցողի ձեռքին է և կարող է տեղափոխվել մեր դրամատիկութեան մէջ: Եթէ ընթերցողը պարտաճանաչ լինի, եթէ նա վճարէ լրագրի բաժանորդագինը, դիմք գնէ, խրախուսէ իր մտաւոր մշակներին: Այս կարծիքի մէջ, ի հարկէ, ճշմարտութեան մեծ մասն է դրած, թէն ոչ ամբողջ ճշմարտութիւնը: Զը պէտք է մոռանալ և այն, որ ընթերցողը երկիրը չէ ընկնում, այլ պատրաստվում է. չը պէտք է աչքից գցել և այն, որ ընթերցողն էլ իր պահանջներն ունի: Այսպէս թէ այնպէս՝ «Բազմալէպի» շատ եռանդուն կերպով է ընդգծում պարտաճանաչ ընթերցողի անհրաժեշտութիւնը:

Հայ լրագրութեան արդի նիւթական խալալ վիճակն անսկզբի, պիտի չվարանդու ըսելու, թէ ինչ ուղղութեամբ որ այսօր նա շուարած ու տարած քաղցրով կընթանայ ու կը թաւալի ժամանակին անվերջ անուշիկ վրայ, վախճալու է թէ հասնի այն օրն, յօդուած մեր լրագրութիւնը զոյգ ընդ գրականութեան, գտնուի թափուր հանձարեղ գրիչներէ, թափուր ազգու հրապարակագիր մարմիններէ, թափուր ուղիղ և ողջամիտ առաջնորդ խմբագիր անձնաւորութիւններէ, և այսօր այսպիսի լրագրական աղքատութեան նշաններն կ'ընկնին չը տեսնելու: Ինչու վաղուհանին մէջ թափուր մեր միտքը, նոյն իսկ ներկան կը ցուցնէ ազգիս լրագրութեան դէպի անկումն դիմելու՝ Պատճառ. — եթէ պատճառն մենք լուրեր, այլ ազգին վաղեմի պատմութեան թերթներն, անսպառ արձագանգ կուտայ նախնի հայ մեծ աստեղաբաշխին թէ. «Ո՛ր սիրեն հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյր են և ձանձրացողք»: Այս դարաւոր նախատիքը ազգը իր գրասիրութեամբ պէտք է բաւարար, մոռցնել տայ:

Ռուս հռչակագիր երգիծաբան Շչեդրին մի դառն ժամանակ քաղաքացու էր. «Ո՛ր ես դու, ռուս ընթերցող, «Բազմալէպի» այս ամբողջ գանգատներն ու դառն շնչերը կարելի էր ձուլել Շչեդրինի բացառաւորութեան մէջ: Ո՛ր ես, հայ ընթերցող...

Քանի որ խօսքերս վաղեմի ամսագրերի մասին է՝ յիշեմք մի տղեղ երևոյթ, որ նկատեցինք «Հանդէս Ամսօրեան» վերջին, ապրիլի, համարում: Այդտեղ պ. Յ. Գաղաշեան մի շատ զարկածայիմ յօդուած է տպել այն քննութեան առիթով, որ տպված էր «Մշակի» մէջ նրա մի գրքի մասին: Զափի ու սասմանի հասկացողութիւնը այնքան հեռու է փախել մեր բարկացած պարոնից, որ նա ասում է.

Մեր լեզուի դէմ բողբոջն է նաև պ. Նորայր Բիւզանդացին, որի անգործ (!) յօդուածներն այս օրերը հրատարակվեցան «Մշակում» պ. Ստ. Մալխասեանի սրբագրութեամբ:

Ընթերցողը այնպէս կը կարծէ, թէ պ. Ն. Բիւզանդացու յօդուածները պ. Մալխասեան սրբագրում է: Մենք պարտք ենք համարում յայտնել, որ այդ սրբագրութիւնը լոկ տպարանական է եղել: Զը գիտենք թէ ինչու պ. Գաղաշեանին հարկաւոր է եղել յիշատակել, թէ ով է կատարել «Մշակի» այս կամ այն յօդուածի տպարանական սրբագրութիւնը. գուցէ դրանով էլ նա ապացուցած է համարի, որ Խորհրդացի յիշար, ցնդած, գող, աւաղակ ծերունի է... Ո՛վ գիտէ, աշխարհը այժմ սասանեցողից «ապացոյցներ» ժամանակ է ներկայացնում: Բայց պ. պ. Գաղաշեանին, հասկացե՛ք, վերապէս, որ ոչ ոքի համար հետաքրքրական չի լինի, թէ ով է սրբագրել այս-ինչ յօդուածը: Փիչ է մնում մեր խոր ուսումնասիրութիւնների մէջ այնպիսի նրբութեան հասնել, որ դիմք նոյն-իսկ քաշարի առնուր կամ տեղեկութիւն, թէ ո՞ր խառնութիւն է ձեռք բերված այն մտքը, որով տպված է այս կամ այն յօդուածը:

ԻՇԽԱՆ ԻՇԽԱ ՃԱՎԱԿԱԶԵ ԵՒ ՀԱՅԵՐԸ

VIII

Ամենից առաջ—ճշմարտութիւն: Ճշմարտութիւնը հայրենիք չունի, ազգ և լեզու չէ ճանաչում. նա—համաշխարհային է: Ճշմարտութիւնը պահանջեց խոստովանել պ. Սեբաստիոնի տուած սխալները: Ճշմարտութիւնը մեղ վրա պարտք է դնում յայտնելու, որ պ. Սեբաստիոն կարող էր առանց Շարդենի վկայութիւնը բերելու էլ գրել իր տեսութիւնը, ապա ուրեմն նրա այդ վարմունքն էլ մեղ համար դատապարտելի է: Բայց ճշմարտութիւնը մի և նոյն ժամանակ ասել է և տալիս և այն, որ պ. Սեբաստիոն կարող էր մի այնպիսի պատմութիւն՝ որ իշխան Ճավաճաճէի անպայման հաւանութեան արժանանար: Ինչու—Որովհետև Սեբաստիոնը բոլորովին ուրիշ հասկացողութիւն ունի պատմագրութեան մասին: Ահա մի նմուշ:

Բանաստեղծ-իշխանը պատմում է XVIII դարի սկիզբը Վրաստանում: Նա ասում է, որ Պետրոս Մեծը կամենում էր առևտրական յարաբերութիւններ սկսել Պարսկաստանի հետ և, օգուտ քաղելով Դանիակի ու Լարաբադի հայերի աղերասանելից՝ վճռեց տրել այդ տեղերին: Պատրաստելով մի արշաւանք՝ կայսրը ինդրեց վրաց Վախտանգ թագաւորին օգնել իրան: Վախտանգը, ասում է իշխան Ճավաճաճէ, ի հարկէ, կուղենար ազատվել պարսիկների հարեւանութիւնից. վրաց պատմութեան համար շահաւետ էր չունենալ իր սասմանակից երկիրներում մասնատական իշխանութիւն. և հասա այդ պատճառով Վախտանգն ընդունեց Վայսրի առաջարկութիւնը:

Ո՛չ պ. Սեբաստիոն և ոչ մի ուրիշը չէր կարող այսպէս յօրինել պատմութիւնը՝ ինչպէս չէ կարողացել յօրինել Պետրոս Խոսեփանի: Հարևանութեան, սասմանակից երկիրների մասին ինչ խօսք կարող էր լինել քանի որ ինքը Վրաստանը վաղուց հեծում էր պարսից լուծի տակ: Վախտանգի համար ամենամեծ շանք կը լինէր այն, եթէ նրան աջովդէր Պետրոս Մեծի օգնութեամբ հանել Վրաստանը այդ լուծի տակից: Նա հակադրող, ինչօք թագաւոր էր. նա էր, որ վրաց տպարան բաց արաւ Թիֆլիսում, նրան աջովդէց մի հպուստիտ բացառութիւն կաղմել XVI—XVII դարերի վրաց թագաւորների մէջ, որովհետև սկզբից և եթ մասնատականութիւն չընդունեց: Բայց հնչու չէր այդքան բարեխիղճ լինել: Նրա եղբայր Սասնէ Մասնէտի կը—

[illegible]

ցիա, յոյս ներշնչելով ուսանողներին մէջ՝ առաջնորդելով ընտանիքներն յետաձգելու վերաբերմամբ, տարածելով լուրեր, թէ համալսարանի վարչութեան կարգադրութեամբ արձակված ուսանողները բոլորը չը պէտք է յետ վերադարձնեն և այլն։ Դրա հնդհին, մարտի մօտ 11-ին, օրաբարձարի կողմնակիցները թիւը աճեց մի քանի հարիւր հոգով։ Իսկ մարտի 9-ին և 10-ին կայացած ժողովներում վճռվեց՝ մինչև ամսի 12-ը հաւաքել վերջնական տեղեկութիւններ անկարգութիւնները շարունակել ցանկացողների թիւի մասին և որոշեց վերջինների հէնց ձևը։

Կուրսային քուէարկութիւնից երևաց, որ 1366 ուսանողներ ձայն տուցին, 679-ի դէմ, դուրս դուրս շարունակելու համար, մասնացոյց անելով, որպէս վերջինի պատճառի վրա՝ 1) պատուիրակ-ուսանողների վերաբերմամբ, որոնց խոստումներ են տրվում, և իսկոյն և եթ ջնջվում են, և 2) ընկալի խօսքի երաշխաւորութեան անբաւարարութիւնը տեսչութեան գործողութիւնների կարգաւորման վերաբերմամբ (մարտի 12-ի և 13-ի բիւլլետէնները)։ Իսկ այդ երկու պատճառներին ժողովը, գումարվելով հետեւեալ օրը, աւելացրեց էլի պահանջ, որպէս զի ընկալի կողմից թոյլ տրվեն մասնաւոր խորհրդակցութիւններ տեսչական պաշտօնեաների դէպի ուսանողներն ունեցած յարաբերութիւնների հարցի վերաբերմամբ, մինչև որ վարչութիւնը մշակէ նոր հրահանգներ պէղծների համար (բիւլլետէն մարտի 13-ի)։

Մարտի 15-ին դասախօսութիւններին եկաւ ուսանողների մի անշնչան թիւ։ մնացածները, թուով մի քանի հարիւր հոգի, եկան համալսարանի միմիայն ժողովներին ներկայ լինելու համար։ 14 մարտ, հաւաքվելով ուսուցիչների և պրոֆեսոր Սօկոլովի հետ դասախօսութիւնները լսելու համար, զօռով դուրս վաղվցնել այնտեղից իրանց գործադուր անող ընկերների ձեռքով։

Մարտի 16-ին դասախօսութիւններ տեղի ունեցան միայն բժշկական ֆակուլտետի 5-դ կուրսում, որի ուսանողները հրաժարվեցին այլ ևս մասնակցել գործադուրին։ Իրաւաբանական ֆակուլտետում 12 մարդկանց, որոնք եկել էին պրոֆեսոր Ալեկսեյի դասախօսութեանը, սպասում էր 150 ուսանողներից բաղկացած խումբը, որոնք սպասում էին ֆիզիքական բանութիւն գործ դնել նրանց դէմ, որը և ստիպեց համալսարանական իշխանութեանը յայտնել նրանց, թէ ոստիկանութիւն կը կանչվի։ Երբ յետոյ ամբողջ ցրվեց։ Նոյն թիւին հրատարակած բիւլլետէնում զործադուր կոմիտէտը, յանդիմանութիւն յայտնելով ուսանողների այն մասին, որոնք շարունակում են յաճախել դասախօսութիւնները՝ խորհուրդ էր տալիս տարածել գործադուր և առաջիկայ ընդունելիներ վրա, և հասկանալով, որ ցոյց անողների վարմունքի պատճառով իշխանութիւնը ամենակատարական միջոցների կը դիմէ՝ խորհուրդ էր տալիս, բոլոր ուսանողներին համալսարանից արձակելու դէպքում, անհապաղ խնդրելներ տալ նորից ընդունվելու մասին և տալ ամեն տեսակ ստիպողական ստորագրութիւններ, և ապա, Կիւլիլի նման, շարունակել գործադուրը։

Մարտի 17-ին համալսարանում պարապմունքները դադարեցրվեցին մինչև ամսի 22-ը։ Բոլոր ուսանողները ձանաղվեցին արձակված, բայց նրանց իրաւունք տրվեց՝ խնդրաւորաբար լինելու վերընդունվելու մասին, որ կախված կը լինի ուսումնական վարչութեան հայեցողութիւնից։

Այս օրերի ընթացքում խնդրաւորութիւնը սկիզբը դանդաղում էր և դրութիւնը սպասողական էր։ Իսկ մարտի 17-ին, 18-ին, 20-ին, 22-ին և 24-ին դուրս եկած ընդունելիները, զործադուր մասնաժողովի հստակագրութեամբ, նորից թախանձագին պահանջում էին, որ բոլորը խնդիր տան, ամենայն տեսակ պարտականութիւններ ստորագրութեամբ յանձն առնեն, գործադուր վերանորոգեն, նրան տարածելով և ընդունելիներին վրա, ապա, ուսանողութիւնը ընդհանրացնելու նպատակով, պահանջին վերադարձնել այն ընկերներին, որոնք աքսորված են Բոլոր բարձրագոյն դպրոցներից, նոյնպէս և պահանջին համալսարանական տեսչութեան վերադարձնելու։

Այս ագիտացիայի պատճառով համալսարանի վարչութիւնը ստիպված էր առանձին ղեկուղութեամբ վարել ուսանողներին վերընդունելու գործում։ Ընդհանուր թիւից (4,407) վերընդունելիների մասին խնդիր էին տուել 4,129 հոգի։ Նրանցից ընդունվեցին 3,318, իսկ մերժվեցին 174։ Սրանցից 404-ը այնպիսիք էին, որոնց նորից Մոսկվայի համալսարանն ընդունելը ցանկալի էր, իսկ 370-ը այնպիսիք էին, որոնք կարող էին լինել ընդունվել յաջորդ տարին։ Բացի սրանցից՝ մերժվեց ընդունել 37 ուսանողի,

որոնց մասին կային ոստիկանական աննպաստ տեղեկութիւններ։

Ձնդուրով ուսանողները հեռացնում են Մոսկվայից դէպի իրանց ծննդավայրերը, բացի Մոսկվայի մշտական բնակիչներից, որոնք յանձնվեցին ազգականների հոգաւորութեան։

Ձնդուրով մեծ թիւի 49 հոգու, որոնք առանձնապէս նկատված էին ագիտացիայի գործունէութեան մէջ և ձերբակալված էին համալսարանից դուրս տեղի ունեցած ժողովներում՝ պահպանութեան կանոնադրութեան հիման վրա, երկու տարով արգելվեց բնակվել մայրաքաղաքներում և համալսարանական քաղաքներում։

Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ բոլոր այս ժամանակամիջոցում ուսանողների անհազին մեծամասնութիւնը չէր մասնակցում անկարգութիւններին։ Միևնոյն ժամանակ ցոյց անողների շրջանում էլ մի մասը, որ չէր համակրում գործողութեան բռնի միջոցներին՝ կարծիք յայտնեց, թէ պէտք է դադարեցնել անկարգութիւնները, որոնք շարունակելու համար, նրանց կարծիքով, ոչ մի հիմնաւոր պատճառ չը կայ։ Դրան արտայայտութիւն այս կարծիքի՝ ի միջի այլոց հրատարակվեց մարտի 16-ին մի կոչում՝ անհազին ուսանողների խմբի՝ ստորագրութեամբ, որ ցոյց էր տալիս, թէ բոլորովին պատահական կերպով մարտի 12-ին զոյադաւ այն մեծամասնութիւնը, որը որոշեց օրաբարձարական շարունակել։

Նորից յետ ընդունված 3,318 ուսանողների համար դեռ երկու շաբաթ ժամանակ կար պարապմունքները շարունակելու։ Բայց ի նկատ առնելով ագիտատորների սպառնալիքները և կասկածելով, չը լինի թէ արանց և խռնի կուսակցութեան մէջ սուր ընդհանրութիւն տեղի ունենա՞ն՝ անհրաժեշտ համարվեց, առանց դասախօսութիւնները վերսկսելու, սկսել հարցաքննութիւնները, հաստատված ցուցակով, ձեռք առնելով դուրսընթաց միջոցներ թէ կարող և թէ ընդունելիներին պահպանելու համար։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Քննիչ պ. Աբել, որին յանձնված է Թիֆլիսի քաղաքապետի և վարչութեան չորս անդամների գործի ընդունելիւնը՝ դիմել է գրաւոր կերպով քաղաքապետին, որպէսզի վերջինս յայտնէ, թէ մինչև անցեալ 1898 թիւ հոկտեմբերի 17-ը, այն է մինչև կառավարչապետի կարգադրութեամբ վարչութեան մէջ ընդունելիւն կատարվելը, ինչպէս են եղել բաժանված քաղաքապետի և վարչութեան անդամների մէջ պարապմունքները։

Կուրանի շրջանի հրամանատարը այս օրերս հետեւեալ առաջադրութիւնն է արել իրան ստորադրեալ պատմաններին։ Կովկասեան զինուորական շրջանի զորքերի հրամանատարի ժամանակաւոր պաշտօնակատարը, ներկայ մարտի 27-ից, տեղեկացրեց ինձ, որ Կուրանեան շրջանից մարդիկ են գալիս Անդրկովկասեան նահանգները՝ դուրսգործների թողած և ուրիշ ազատ հողերը դիմելու համար, մի բան, որ շատ դժուար դրութեան մէջ է դնում թէ տեղական վարչութիւնը և թէ Թիֆլիսի գաղթականական ընկերութիւնը։ Անդրկովկասեան առեւտրի, որ Անդրկովկասի վրա գաղթելու վերաբերեալ օրէնքը չէ տարածվում, ուրեմն և այդ պատճառով վերոյիշեալ մարդկանց այժմ ոչ մի հող չէ կարող տրվել, և որ, վերջապէս, հողեր դիմելու Անդրկովկասում այդ պատճառով աննպատակ է դառնում։ Գնեքաւ-լէյտենանտ Ֆրեյէ խնդրում է կարգադրութիւններ անել այդ շարքումը դադարեցնելու համար։ Հաղորդելով վերոյիշեալը ի լրումն իմ շրջաբերական հրամանագրութեան, մարտի 21-ից № 3187՝ առաջարկում եմ բաժանմունքների պատմաններին անհապաղ ամենաիրական միջոցներ ձեռք առնել՝ դադարեցնելու գաղթականների հոսանքը դէպի Անդրկովկաս։

Նրէկ, ապրիլի 9-ին, ժամը 1-ին, Կոյրերին խնամող Կովկասի բաժանմունքի սեփական հողի վրա, Կոյրերի համար նոր շինութեան հիմքը դրվեց և այդ առիթով մաղթանք կատարվեց։ Ներկայ էր բաւական բազմութիւն։

Վաղը, ապրիլի 10-ին, ժամը 1-ին, Կովկասեան Կայսերական բժշկական ընկերութեան մէջ տեղի կունենայ հանդիսաւոր տարեկան նիստ, որտեղ բացի ընկերութեան գործունէութեան 1898—1899 թ. հաշիւներից, կը կարդացվեն նաև հետեւեալ հաղորդագրութիւնները։ Փ. Գ. Մելքոնով՝ սանիտարական համառօտ տեղեկութիւն Կովկասի գործի մասին վերջին 20 տարվայ ընթացքում, և Ա. Ա. Մուխարյանով՝ հա-

մառօտ տեսութիւն Թիֆլիսի պատեօբեան կայարանի տաս տարվայ գործունէութեան մասին։

Մեր երկրի այն արդիւնների վերաբերմամբ, որոնք նշանակութիւն ունեն մեծ վաճառանոցներում վերջին տեղեկութիւնները հետեւեալներն են։ Եւրասիական և մետաքսը լաւ գին ունեն։ Մարտի 1-ի պարսկական և Նուխ-վայ մետաքսը ծախվել է 43—44 ֆրանկ, առաջին բաղի բոժոժը 10⁶/₈—10⁷/₈ ֆրանկ, դեղինը 11¹/₈—11³/₈ ֆրանկ մի քիւն (2¹/₂ ֆունտ)։ Լիօնի վաճառանոցում նկատվում է մետաքսի մեծ պակասութիւն։ Կարծում են, որ դեռ երեք ամիս, մինչև նոր չերամի հասնելը, գնքը պէտք է բարձրանա։ Մոսկվայում խաւարական թելը 18¹/₃₀ դենիանոց՝ ծախվել է 400—380 ռուբլի։ Կովկասի թելը 28²/₃₀ դենիանոց՝ 270—280 ռուբլի, 38³/₄₀ դենիանոց՝ 300—310 ռուբլի։ Անդուխի և Նուխվայ թելը՝ 210—240 ռուբլի։ Կոկանդի թելը՝ 160—167 ռ.։ Բամբակը Մոսկվայում առաջվանից փոքր ինչ բարձրացել է. պահանջում են Միջին-Ասիայի բամբակ, բայց ծախող չը կայ։ Ամերիկայի սերմից դուրս բերած առաջին տեսակի բամբակի համար տալիս են պուլին 9 ռ. 30 կ., երկրորդ տեսակին՝ 8 ռ. 50 կ., Բուխարայի՝ ձեռքով մաքրած բամբակին՝ 7 ռ. 70 կ., մերենայով մաքրածին՝ 7 ռ. 85 կ., Խիվայի անցեալ տարվայ բամբակին՝ 7 ռ. 45 կ., Խորասանին՝ 6 ռ. 40 կ., Մազանդարանին՝ 6 ռ. 20 կ.—6 ռ. 25 կ.։ Նդիպտոսում բամբակի գինն սկսել է ամրանալ։ Անդուխի նշանաւոր վաճառանոց Լիվերպուլ քաղաքում բամբակի գինը ամրանում է. կարծում են, որ նա այլ ևս զգալի կերպով չը պէտք է ընկնի, որովհետև պարզվում է հունձի քանակութիւնը։ Հացահատիկն և բրինձի գինը ամրացած է, բայց այլ ևս չէ իջնում։ Ըստ պատմի են նոր ցանքերի վիճակի պարզվելու։ Նաև ի վերաբերմամբ նկատվում է դադար և մի փոքր թուլութիւն. խալական Գեյնուա քաղաքում ուստաց կերութիւնը ծախվել է կվինտալը 81¹/₃, իսկ ամերիկականը՝ 99³/₄ կ.։ Լոնդոնում նոյնպէս իջել է նաւթի գինը։ Վորայի ափերում նոյնպէս կանգ է առել գինը, չէ բարձրանում։ Ցարիցինում հաւասար է 82¹/₂ կոպէկի պուլը։ Նաւթային մնացորդների գինը թէև առաջվայ պէս լաւ է, բայց մեծ վաճառքներ տեղի չունեն. սպասում են գործարանների կողմից պատուէրների։ Վճարք և Վճարգուլի ֆիրմաները առաջարկում են կանաչ մը-նացորդներ ցարիցինում պուլը 18 կոպէկով, գնողները դեռ չեն շտապում, մանաւանդ որ նոյն պղ մնացորդները ներկայումս ծախվում են 16 կոպէկով։ Ինչ վերաբերում է սև մնացորդներին՝ թէև նրանց գինը ներկայումս շատ բարձր է, 23—24 կոպէկ պուլը՝ բայց դա այն պատճառով է, որ Բագուից քիչ ապրանք է տեղ հասցրած։ Իսկ շուտով երբ չոգեմաւերը կը դանձրանան կընկնի։ Մոսկվայում նաւթի վաճառումը աննպաստ վիճակի մէջ է. գնող քիչ կայ։

Թիֆլիսի պօստ-հեռագրատան կառավարիչը խնդրում է մեզ յայտնել, որ Զատիկ տօների պատճառով չնորհաւորական հեռադիւրների կընդունվեն ապրիլի 12-ից սկսած, որի վրա հասցէից առաջ պէտք է գրված լինի՝ «չնորհաւորութիւն» խօսքը։ Այդպիսի հեռադիւրները կը յանձնվեն հասցէ կրողին Զատիկ օրը, առաւօտեան ժամը 8-ին։

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 4-ին, մեր քաղաքային ակումբի դահլիճում, դերասան Յովսէփ Կարինեան, մասնակցութեամբ սերողների, տուոց մի ներկայացում։ Խաղացան «Արշակ երկրորդը», ողբերգութիւն Գալիպեանի, և Վեբ-լադարի յիշատակաւորը, հեղ. Գոգոլի, որ խաղաց պ. Կարինեան. շատ լաւ էր մանաւանդ երկրորդ արարուածում։ Դահլիճը համարեա լի էր Կարնի ընտիր հայ և օտար հասարակութեամբ։

ԿԱՐՍԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի համար Կարնի երկաթուղին ունի մեծ նշանակութիւն։ Կաղզուանցիները պարապում են մեծ մասամբ այգեգործութեամբ։ Ներկայումս կարողութիւն կը տայ Կաղզուանի մրգերն ուղարկել հեռուոր տեղեր վաճառելու համար։ Կաղզուանից մինչև Կարս մօտ 80 վերստ է ձանապարհ բարեկարգվում է և պէտք է դառնայ խճուղի։

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Մարտի 14-ին տեղի ժողովարանի դահլիճում, Սողոմոնեան աւուսիները, սերողների մասնակցութեամբ, ներկայացրին «Ալան բալասի» դրաման, և «Մինիկ»

փողովիլը, իսկ 28-ին ներկայացրին «Ընտանեկան փոթորիկ» կոմէդիան, «Բոսպորոյնի պանդօկը» և «Պառաւը հանաք է անուան փողովիլը»։ Առաջին ներկայացումը անցաւ սպասածից աւելի բաւական ժողովուրդ կար և մեծ հետաքրքրութեամբ էին նայում, իսկ վերջին ներկայացման թէպէտ խաղը այնքան էլ անաշուղ չէր, բայց ժողովուրդը համեմատաբար սակաւ էր։ Մարտի 30-ին Սողոմոնեան ամուսինները ձանապարհվեցին Ասիաբաղը, իսկ Զատիկից յետոյ դալու են այստեղ վերջին ներկայացումը տալու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, մարտի 20-ին

Ս. Վարդանանց տօնի և յաջորդ երեկները տղայոց ուսումնարանի սրահում տեղի ունեցան ներկայացումներ հայերէն և անգլիերէն լեզուներով յօգուտ այստեղի երկսեռ ուսումնարանների։ Ստացված զուտ մուտքը, ինչպէս լսում եմ՝ մերձ 700 դրան է, որը թէև մի շատ չնչին գումար է, բայց տեղական բոլոր հանգամանքները ի նկատի ունենալով, դեռ շատ է, քանի որ նոր-Ջուղայից բնակաւին սովորած չեն հանրօգուտ ձեռնարկների համար գումար վճարել, այն ևս թատրոնի համար։ Ինչ և ինչ՝ ներկայացումները այնոց անցան։ Ներկայ էին մեր թեմակալ առաջնորդը և գրեթէ այստեղի բոլոր եւրօպացիները բացի մեր ջոյբերից, որոնք միշտ սովոր են այսպիսի դէպքերում իրանց աններկայութեամբ փայլել։ Սրողները խուճը այս անգամայ յաջողութիւնից բաշխելով ժողովրդ է Զատիկից յետոյ մի ուրիշ ներկայացում ևս տալ։ Այդպիսին ենք մաղթում։

Շատ ուրախակի է, որ սրբազան առաջնորդի և հոգաբարձութեան ձեռնարկած օրիորդաց ուսումնարանի շինութեան գործը աջողութեամբ է պսակվում։ Հանգանակութեան տօմարը արդէն պտոյտ է ածվում, առաջնորդը 1000 դրան է գրվել և իր կարգադրութեամբ այստեղի ունեւոր վեց թաղական եկեղեցիները ևս 3700 դրան են գրվել։ Յուսալի է, որ Նոր-Ջուղայում միայն 10,000 դրանից աւելի հանդանակվի. անշուշտ Պարսկաստանի միւս քաղաքներում և Հնդկաստանում և Զապայում բնակվող հայերի մէջ ևս հանգանակութիւն կը լինի, քանի որ տեղական նպաստներով միայն չէ կարելի այսպիսի մի մեծ ձեռնարկ աւարտել։ Լսում եմ, որ շինութեան գործը անմիջապէս պէտք է սկսվի։ Շէնքը շինվում է այստեղի Կուսանաց վանքին պատկանող և գրեթէ նրան կից մի այդու դեմքի վրա։ Հոգաբարձութիւնը արդէն դիմումներ է արել Թիֆլիս, այնտեղից բերել տալու համար այստեղի հանգամանքներին և պահանջներին համապատասխան մի ուսուցիչ և մի ուսուցչուհի, որոնք, յոյս ունենք, անձուրաբար և զոհողութեամբ պլոր յանձն առնեն այս երկար ճանապարհը գալու և այս հեռու վայրում ընկած իրանց ուսումնաւարաւ եղբայրների և ջոյբերի դաստիարակութեան սուրբ գործին նուիրվելու։ Նոր շէնքը միջոցով և նոր ուսուցիչների եռանդով ուսն գործունէութեամբ յոյս ունենք քիչ ժամանակի մէջ մեր փափագած նախնանքի վիճակին հասնելու։

Նոր-Ջուղայից

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Կ. Պօլից Frankfurter Zeitung» քաղաքին հեռագրում են մարտի 30-ից. «Պատերազմական տուգանքը հարցում Ռուսաստանի գործունէութեան եղանակը սատարիկ զբաղեցնում է այստեղի դիպլոմատիական շրջաններ։ Ռուսաստանը ոչ միայն ուզում է պատերազմական տուգանքի վճարումը, այլ և պահանջում է, որ եթե վիլլայէտներում հարկատուական մասի վարչութիւնը յանձնվի Օսմանեան բանկին, որ Ռուսաստանի պարտքը վճարելուց յետոյ, մնացած ազատ գումարները պէտք է ուղարկէ թիւրքաց ֆինանսների մինիստրութեանը։ Այս նը պատակով եօթը վիլայէտներում օսմանեան բանկին նոյնպիսի իրաւունքներ կը տրվեն՝ որպիսի իրաւունքներ ունի «Dette Publi»-ը ի վարչութիւնը՝ իրան յատկացրված եւկամուտների աղբիւրների վերաբերմամբ։ Ռուսաց դեսպանութեան և Բ. Իւսան ու օսմանեան բանկի մէջ կայացած համաձայնութեան համեմատ, արդէն մշակված է մանրամասն կանոնադրութիւն, որով իրաւունք է տրվում Բ. Իւսան վերոյիշեալ եօթը վիլայէտներում նշանակել վերահսկողներ։ Թէ այդ կանոնադրութիւնը և թէ Ռուսաստանի ու Թիւրքիայի մէջ եղած համաձայնութեան նախագիծը երէկ ընդունվում էին մինիստրների արտակարգ նիստում, բայց դեռ ևս վերջնական վճիռ չէ կայացած։ Խորհրդի անդամների մեծամասնութիւնը, սակայն, նպաստաւոր կերպով է վերաբերվում նախագիծին։

—Նիւ-Եորկից հաղորդում են «Times» լրագրին, որ վերջին ժամանակներս Ամերիկայում սաստիկ զայրացած են գերմանացիների դեմ, Սառայում տեղի ունեցած դեպքերի առիթով: Կոնգրեսի անդամներից մի քանիսը մինչև անգամ պահանջում էին պատերազմ յայտնել Գերմանիային: Այնու ամենայնիւ Սառայում կարգը վերականգնելու համար անհրաժեշտ է համարվում յետ կանչել Բոգե հրապատուիրն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

8 ապրիլի

ԿԻՐՆՇՏԱԿ: Երբեմն շոգենաւ եկաւ այստեղ, վաղը կը գնայ դէպի ծոցը: ՄՈՍԿՎԱ: Գաւառական գէմնավոր ժողովում յայտնված է, որ մի անձ, որը ցանկանում է անյայտ մնալ՝ նուիրել է 100,000 ռուբլի, 200 անդամների հիւանդների համար չինովիւն կառուցանելու:

ԼՈՒԿՈՒՆ, Չարս Բէթսֆոր երէկ Իօրկում, պահպանողականների ժողովում, ասաց, որ Զի-նստանի պատճառով Ռուսաստանի հետ պատերազմի երկուղը անհնի է:

ՎԻԵՆՆԱ: Կայսրը ընդունեց դեսպան իշխան Կապիթանին:

ՇԵՐԲՈՒՐԳ: Մովապետ Բիէնէմէ «Amiral Bhamer» նաւի վրա մի մեծ խնձոր տուեց, որին ներկայ էր ուսաց «Կրէյթեր» նաւի հրամանատարը: Բաժանիկը առաջարկվեցին ուսաց և ֆրանսիացոց նաւատորմի կենացը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ի նկատ առնելով անբեր-բիւթիւնից վնասներ տեղերի համար ձիաներ առնելու յաջող հետևանքները՝ ներքին գործերի մինիստրութիւնը կարգադրութիւն է արել նորից 28,000 ձի առնել: Այդպիսով Վոլգա-Կամայի գաւառները միանգամից 70,000 ձի կուղարկվի: Առնված ձիաների մեծ մասը արդէն տեղ է հասցրած:

ՊԱՐԻՉ: Մի քանի լրագրիւնների հաղորդած լուրերին հակառակ, հաւատացնում են հաստատ աղբիւրից, որ վճարակ դատարանը երէկ ոչ մի վճիռ չէ կայացրել երեսու երես կանոնացնելու խնդրի վերաբերմամբ: Հաւատացնում են նաև, թէ Բալլո-Բոպրէ կը վերադառնէ իր գեկուցումը ապրիլի 17-ին: Այդ պատճառով դատարանի վճիռը կը յայտնվի միայն մայիս ամսվայ առաջի չաբաթվայ վերջը: Լուր է պտտում, թէ դատարանի անդամներից մեծամասնութիւնը դէմ է գործի վերաքննութեան:

ՊԱՐԻՉ: «Figaro» լրագիրը տպում է Լէբրէն-Բէնոի և ուրիշ օֆիցերների ցուցմունքները, որոնք ասում են, թէ Գրէյֆուսի խոստովանութեան մասին իրանք գիտէին նրա պաշտոնա-գութ լինելուց անմիջապէս յետոյ: Լէբրէն-Բէնո գոյց տուեց, թէ Գրէյֆուս, վկայելով իր անմեղութեան մասին՝ աւելացրեց. «Նա մեղաւոր չեմ երեք տարուց յետոյ կիմանա իմ անմեղութեան մասին: Մինչևտեղ գիտէ, որ եթէ ես Գերմանիային տուել եմ զօկումներս, այդ զօկումներները անչափ են եղել ու միայն այն նպատակով, որ ստանամ աւելի նշանաւորները: Ապա Լէբրէն-Բէնո պատմում է, որ նա եղել է յետոյ Գոնգի և Պէրիէի մօտ և որ իրան հրամայված էր լուծ-թիւն պահպանել:

9 ապրիլի

ԿԻՐՄԵՆՉՈՒԿ: Զինուորական մինիստրը շոգենաւով ուղևորվեց Կիեվ:

ՆՈՎՈՐՈՍԿԱՍՍԿ: Տաք օրեր սկսվեցին: Պարտէզներում ծաղկեցին նարնջի, բալի, տանձի ծառերը: Գետակները շատ վարարել են:

ՊԱՐԻՉ: Շվեդիայի թագաւորը երեկոյան մեկ-նեց այստեղից:

Ալժիր հասաւ Գրիմոն և ողբերգութեամբ ընդունվեց ընդամենի ամբողջ կողմից: Գրիմոն խորհուրդ տուեց ամբողջին խաղաղ մնալ: Ոչ մի միջադէպ տեղի չունեցաւ:

Թագաւոր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ Բ. ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

(Կուկիւ, Վորոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

Ա. Ի. Ա. Ի. Օ. Ն. Ե. Բ. Բ.

Բ. Ա. ՆԱԽԱՐԱՐՆԵՐ—11—12 ժ. վերաբու-

ժողովեան, վնասակար (սիֆիլիս) և միզապո. 5. Վ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդալին 5.

Ջ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԿ—12—1 ժ. ականջի, կողորդի, թթի և կրծքի 5.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—11/2 ժ. ներքին և երեխայից 5.

Ա. Գ. ԳՈՐԻԿՈ—11/2—21/2 ժ. ներքին և մի-առնակաւ 5.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՉԷ—5—6 ժ. ներքին և երե-խայից 5.

Ա. Ն. ՇԱԿԱՎԱՍԿ—6—7 ժ. նեարդալին (ե-րեխայաբուժութիւն), վնասակար և ժողովի 5.

Բ. Ա. ՆԱԽԱՐԱՐՆԵՐ—61/2—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ Տիւնդանդումը քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-նում մէկի, իրի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չբաւորները ձրի: Համախորհրդի (Կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերատեսուչ՝

123—150 Բժշկապետ ՆԱԽԱՐԱՐՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐՆԵՐ

Մարտի 10-ին, շաբաթ օր, ժամը 10-ին, երեկոյան, նշանակված է պ.պ. անդամների

Ընդհանուր Ժողով:

Քննութեան առարկաներն են. 1) Ամարային և ձմեռվայ բնակարան վարձելու հարցը. 2) Ժողովարանի ձմեռային բնակարանը ե-րեխոսկանութիւնով լուսաւորելու հարցը և 3) նոր կանդիդատների բուժարկութիւն: 1—1

Բազուի նախագահան դատարանի շքանի

Երդուեալ հաւատարմատար

ԿԵՐԱՊԵՏ ԵՆՂՈՒԲԵՆ

Ընդունում է քրէական և քաղաքական դա-տեր վարելու: Հասցէն՝ Բագու, Վրանդեթկայա փողոց, տ. № 7: (Врангельская ул., № 7, домъ Ханжарова): (Կ. Տ. Շ.) 1—6

Հ Ր Ս Ի Ե Ր

Ամիս 11-ին, առաջիկայ կիրակի օրը, Ս. Պատարագից յետոյ, 12 ժամին, Նորա-Հէն Ս. Աստուածածին եկեղեցու բարե-պաշտ ծխականները երկրորդ անգամ հրա-ւիրվում են յիշեալ եկեղեցին՝ նոր երեց-փոխ ընտրելու:

Գործ. ա. մ. եկ. Հ. Տփիլիսի՝

Զաքարիա քահանայ Զարդեղեանց

2—2



ԲԺԻՇԿ Զ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վնասակար, ախտական, մու-թու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝ Առաւօտեան 9—12 ժամը

Երեկոյան 5—7 ժամը:

Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31:

(Կ. Տ. Շ.) 23—100



(9 և 19)

3—12

ԹԻՖԼԻՍԻ Հայոց Հրատարակչական Ընկերութեան

Վարչութիւնը յայտնում է, որ Ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն ապրիլի 13-ին, երեքշաբթի օր, երեկոյան ժամի 7 1/2-ին, Թիֆլիսի քաղաքային դու-մայի դահլիճում նշանակված է՝

Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Ժ Ո Ղ Ո Վ

որի պարագմունքի առարկաներն են.

- 1) 1898 թւի տեղեկագրի, հաշիւ և 1899 թւի նախահաշիւ ընթերցումը և հաստատումը:
- 2) Պաշտօնատար անձերի ընտրութիւնը՝ Վարչութեան նախագահի, փոխ-նախագահի, Վարչութեան մի անդամի, գրապահի և քարտուղարի և Թագաւորութեան ժառանգ-դովի չորս անդամի:

Վարչութիւնը հարկ է համարում յայտարարել, որ Վարչութեան վերջին նիստը նշանակված է ապրիլի 13-ին, երեկոյան ժամի 7-ին և մինչև այդ նիստը կը լինի այն նոր անդամների ընտրութիւնը, որոնք կը ցանկանան Ընդհանուր Ժողովին մաս-նակցել:

(2. Ե.)

1—2

ՖԻՐՄԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1891 ԹԻՒՅ

Ս. Գ. ՏԵՐ-ՅՈՎԻՏԱՆԵԱՆԵԱՆԳԻ

Ի Ս Ա Ն Ո Ւ Թ Ո Ւ Մ,

որը գտնվում է Երևանեան հրապարակի վրա, Դօրցոփայա նոսերների մուտքի կողքին,

Ա Պ Ր Ի Լ Ի 1-Ի Ց

Վաճառվում են է ժ Ա Ն գներով ամենաբարձր տեսակների

Մ Ս Հ Ո Ւ Դ Ե Վ Ե Ն Ն Ե Ր

Ստացված ՖԻՐՄԱՆԱՅԻ և ԱՆԳԼԻԱՅԻ յայտնի գործարաններից:

Պատուէրները կատարվում են, ինչպէս և առաջ, հմուտ և ձեւիչի հսկողութեամբ:

Գները էժանութեան և ապրանքի լաւութեան մասին պ. պ. գնորդները կա-րող են համոզվել անձամբ, յաճախելով մեր խանութը:

(Կ. Շ.)

1—10

ԷԺԱՆ, ԼԱԻ ԵՒ ԺԱՅԱԿՈՎ

ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ

Գործ. պրոսպեկտ, 1-ին գիմնադիայի հանդէպ:

Ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխանե-րի զարնանային և արմաւայ պատրաստի հագուստներ: Գների է-ժանութեան և ապրանքի լաւութեան մասին պ. պ. գնորդները կա-րող են համոզվել, անձամբ յաճախելով մեր խանութը:

5—10



BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}

ՖԻՐՄԱՆԱՅԻ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԻԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԻՆ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից,

Ն. հակառակը՝ Բաթումից Մարսէ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթու-մից՝ չորեքշաբթի, 14/26 ապրիլի, ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԻԿ: Ն. պաշտ-չառունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տուսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արսոն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-նեանին, Սիօնի փող. Թոշափարուխովի և Մայսուրաձէ քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլարեանին, Կօլոբակինանայա հրապարակ: ՆՈՎՈՐՈՍԻՑԿԱ—պ. Մելիքի Զեքէնդորեան:

(Կ. Տ. Շ.)

1—20

ՈՒՐԲԷՆ



L'URBAIN

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԿԵՆՏԻ, ԳՐԱՄԱԳԼԻԻ, ՕԺԻՏԻ, ՀԱՍՈՑՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈ-ՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձնահարկումներով՝ հիւանդութեան և աշխատելու անընդունակու-թեան դէպքերում, և մասնակցութիւն ունենալով զուտ արդիւնքի մէջ հէնց ապահովա-գրութեան առաջին տարուց սկսած: Գրասենեակը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան երկրի, Թիւրքեստանի և Բուխարայի համար գտնվում է Թիֆլիսում, Միքայէլեան փո-ղոց, տուն Ամիրազովի № 103:

Գլխաւոր լրագոր՝ ԲԱԳՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ՏԵՐ-ՄԱԹԵՈՍԵԱՆ Տեսուչ՝ ՆԻԿՈԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ՏԵՐ-ՄԱԹԵՈՍԵԱՆ

Տեղեկութիւններ և բարձրները տալիս են ընկերութեան գործակալները կայսրու-թեան բոլոր քաղաքներում:

(ամս. 10, 25)

19—20